Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր

2021թ. տարեկան հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՆ ՈԼՈՐՏՈՒՄ - - - - - - - - - - - - - - 2
1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 3
1.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 3
2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ - - - - - - - - - - - - 5
2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 5
2.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - - - - - - - - - - - - - - - - - - 8
2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - - - - - - 10
2.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 12
2.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 14
2.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - - - - - - - - - - - - -16
2.7 ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 18
2.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ- - - - - 20
2.9 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 22
2.10 ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 24
2.11 ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ- - - - - - - - - - - 25
2.12 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 27
2.13 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ, ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 28
2.14 ՀՀ-ՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - - - - - - - - - - - - - - - 29
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՐՏԵԶ - 32

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը:

Կառավարությունը, որպես բոլոր ուժերն ընդհանրացնող ղեկավար մարմին, ներդնելու է բոլոր ջանքերը, որպեսզի գյուղը և գյուղատնտեսությունը դառնան բարեկեցիկ, առողջ և ապահով կյանքի պայման:

ՀՀ կառավարության ծրագիր

Կառավարության տեսլականն է առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ: Որակապես տարբերվող գյուղատնտեսության ստեղծմանը մասնակից ձեռնարկատիրական գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտներին Կառավարությունը կընձեռի միատեսակ պայմաններ, հավասար հնարավորություններ, արդար մրցակցային և կայուն միջավայր:

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը, որի համախառն արտադրանքի 97%-ն ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջինում 1.48 հա հողատարածք: ՀՀ-ում զբաղվածների 21.8 %-ն ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում: Այն նշանակալի է ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը, բնակության վայրն ու պայմանները, ինչպես նաև բնակչության կյանքի որակն ու տևողությունը:

Գյուղատնտեսության ոազմավարությունը միտված է ՀՀ-ում ներառական աճին, գենդերային հավասարությանը, ինստիտուցիոնալ կայունությանը, ինչպես նաև հիմնված է հետյալ սկզբունքների վրա՝ ագրեգացում, առևտրայնացում, կողմնորոշում դեպի որակ, երիտասարդության ներգրավվածություն, դիվերսիֆիկացում և ոիսկերի կառավարում, կլիմայի փոփոխություններին հարմարվողականություն, դիմադրողականություն և շրջակա միջավայրի կայունություն, տեխնոլոգիաների արդիականացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կառավարության ջանքերը ևս ուղղված են այդ ոլորտում իրականացվող քաղաքականության խոչընդոտների վերացմանը, պետական աջակցության մեխանիզմների մշակմանն ու ի հայտ եկած ճգնաժամային ոիսկերի մեղմմանը:

2021 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը շուրջ 933 մլրդ դրամ է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 98.9 %:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մեկ տասնյակից ավելի պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումն է, արտադրական հզորությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումն ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների կայունացումը: Հատկանշական է, որ 2018-2021 թվականներին գործողության մեջ դրվեցին նոր ծրագրեր, միաժամանակ գործող ծրագրերում իրականացվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնց մեծ մասը նախատեսված էր տնտեսական նոր իրավիճակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ոազմավարությունները ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2021 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ագրարային քաղաքականությունը խարսխված է հետևյալ հիմնական փաստաթղթերի վրա՝

1. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշում)

2. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշում)

3. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ և միջոցառումների ծրագիր (ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Լ որոշում)

4. Վարկերի/լիզինգի փաստացի տոկոսադրույքների առավելագույն չափ և արտոնյալ պայմանները սահմանող ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշում:

2021 թվականին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում տնտեսությունում ներդրումների ծավալը կազմել է շուրջ 155 մլրդ դրամ, որից միայն կապիտալ ներդրումների ծավալը՝ շուրջ 105 մլրդ դրամ:

Ստորև առավել մանրամասն ներկայացված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսավարողներին մատչելի ֆինանսական ռեսուրսների ապահովմանը, կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

2021 թվականին շարունակվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184 Լ որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը:

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ և այլ որոշումներով Ծրագրում պարբերաբար կատարվել են փոփոխություններ և լրացումներ, ըստ որոնց մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ֆինանսական կառույցների կողմից ՀՀ դրամով տրամադրվող վարկերի կամ լիզինգի փաստացի տոկոսադրույքը չի գերազանցել 14%-ը և սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որ վարկերը կամ լիզինգը տնտեսավարողներին հասանելի են եղել 0% տոկոսադրույքով՝ 3-15 մլն ՀՀ դրամ, ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ու ավանդական այգու հիմնման համար՝ 3-30 մլն ՀՀ դրամ, տավարաբուծության և կաթնային գոմշաբուծության զարգացման համար՝ 3-50 մլն ՀՀ դրամ գումարի սահմաններում, վարկի մարման մինչև 5 տարի, ավանդական այգու հիմնման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 7 տարի, խոզաբուծության և թռչնաբուծության զարգացման համար տրամադրվող վարկերի դեպքում՝ մինչև 3 տարի ժամկետով, մայր գումարի և տոկոսադրույքի մինչև 12 ամիս, ավանդական այգու հիմնման նպատակով տրամադրվող վարկերի դեպքում՝ մայր գումարի առավելագույնը 4 տարի արտոնյալ ժամկետով:

2021 թվականի մարտի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ և 2020 թվականի մարտի 31-ի N 416-Լ որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության N 417-Լ որոշումը, համաձայն որի, Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը շարունակվել է ֆիզիկական անձանց 0% տոկոսադրույքով, մինչև 1 մլն դրամ վարկերի տրամադրման գործընթացը:

2021 թվականին տրամադրվել է 29487 միավոր վարկ՝ շուրջ 73 մլրդ դրամ գումարի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 9.7 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տրամադրված վարկերի գումարն ավելացել է 9.5 մլրդ դրամով: Ծրագրի

շրջանակում 2018-2021 թվականներին տրամադրված վարկերի ծավալը, քանակն ու 2021 թվականի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 1-ում, 2-ում և 3-ում:



Գծապատկեր 1. Տրամադրված վարկերի քանակ, հատ



Գծապատկեր 2. Տրամադրված վարկերի գումար, մլրդ դրամ



Գծապատկեր 3. 2021թ. տրամադրված վարկերի գումարի և քանակի բաշխվածությունն՝ ըստ մարզերի

Ցուցանիշների վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ ծրագրից առավել շատ օգտվել են Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերի և Երևանում բնակվող գյուղատնտեսությունում տնտեսավարողները: Կատարված ներդրումների հիմնական ուղղությունները ներկայացված են գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Տրամադրված վարկերի բաշխվածությունն՝ ըստ ուղղությունների

2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

2021 թվականի փետրվարի 11-ին հաստատվել է ՀՀ կառավարության N 175-Լ որոշմամբ սահմանվել է, որ գյուղատնտեսության ոլորտում լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող պետական աջակցության ծրագրերի շրջանակում մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ֆինանսական կառույցների կողմից ՀՀ դրամով տրամադրվող վարկերի կամ լիզինգի փաստացի տոկոսադրույքը չպետք է գերազանցի 14%-ը և սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը կամ լիզինգը տնտեսավարողներին հասանելի լինեն 0% տոկոսադրույքով:

Ծրագրով 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 378 շահառուի տրամադրվել է 538 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 199 միավոր տրակտոր, 4 միավոր կոմբայն, լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.2 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 498 մլն դրամ: Ծրագրի շրջանակում լիզինգառուների թիվը, գյուղատնտեսական տեխնիկայի քանակը և բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 5-ում, 6-ում և 7-ում:



Գծապատկեր 5. Լիզինգառուների թիվն՝ ըստ ամիսների և բաշխվածությունն՝ ըստ ամիսների



Գծապատկեր 6. 2018-2021թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ, հատ



Գծապատկեր 7. 2018-2021թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ (հատ) և լիզինգի գումար (մլրդ ՀՀ դրամ)

2.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրանքի ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելու համար:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով 2021 թվականին կատարված լրացումներով ծրագրի ընդգրկման շրջանակն ավելացվել է շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներով, սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև տրամադրվող սարքավորուների օգտագործման ոլորտներով: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, տրամադրվող լիզինգի համար գործել են հետևյալ պայմանները՝ 0 % տոկոսադրույք, 20 % կանխավճար, մինչև 8 տարի մարման ժամկետ: Լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանվել է արտոնյալ ժամկետ, որը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում էր առավելագույնը 3 ամիս, բացի այդ, լիզինգառուի դիմումով ֆինանսական կառույցների (ՖԿ) կողմից կարող էին սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով:

2021 թվականին կատարված համապատասխան փոփոխություններով ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 1000.0 մլն դրամը, ինչպես նաև երկարացվել է տարվա կտրվածքով ժամկետանց պարտավորությունները մինչև 90 օր:

Ծրագրով 2021 թվականին հաստատվել է 342 հայտ շուրջ 10.6 մլրդ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 985 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում ձեռք է բերվել 776 միավոր սարքավորում: Նախորդ տարվա համեմատ լիզինգառուների թիվն ավելացել է 1.8 անգամ, լիզինգի գումարը՝ 1.7 անգամ, սուբսիդավորման գումարը՝ 4.5 անգամ: Տրամադրված լիզինգի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 8-ում և 9-ում:



Գծապատկեր 8. 2018-2021թթ. ծրագրի շրջանակում լիզինգառուների թիվն ըստ ամիսների



Գծապատկեր 9. 2021թ. ծրագրի շրջանակում տրամադրված լիզինգի քանակը և գումարն՝ ըստ մարզերի

2.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, տրամադրվող նպատակային վարկերը, պետական սուբսիդավորման արդյունքում, տնտեսավարողներին հասանելի են եղել տարեկան 0 % տոկոսադրույքով: Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվել է մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2020 թվականին արտահանված արտադրանքի արժեքը:

Ծրագրի շրջանակում 2021 թվականին հաստատվել է 274 հայտ՝ շուրջ 27.3 մլրդ դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 2.7 մլրդ դրամ: Հաստատված հայտերի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է բերքի գնման 13607 պայմանագիր: Նախորդ տարվա համեմատ ծրագրից օգտվողների թիվն ավելացել է 1.5 անգամ, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ 1.2 անգամ:

Տրամադրված վարկերի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 10 և 11-ում:



Գծապատկեր 10. 2018-2021թթ. ծրագրի շրջանակում վարկառուների թիվն՝ ըստ ամիսների



Գծապատկեր 11. 2021թ. ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի քանակը և գումարն՝ ըստ մարզերի

2.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես, վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2% տոկոսադրույքով, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին 0% տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման և մինչև 1 տարի արտոնյալ ժամկետներով:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականին ձեռք է բերվել 750 գլուխ կենդանի՝ 565.0 մլն դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 114 մլն դրամ: Ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 12 և 13-ում:



Գծապատկեր 12. Ձեռք բերված կենդանիների գլխաքանակն՝ ըստ տարիների



Գծապատկեր 13. 2019-2021թթ. ձեռք բերված կենդանիների գլխաքանակն՝ ըստ մարզերի

2.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է մատչելի վարկավորման կամ ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, բուծվող ցեղերի կատարելագործումը, տոհմային գործի զարգացումը արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացեղ և տրամախաչումների միջոցով ստացված խառնացեղ կենդանիների գլխաքանակի ավելացումը, ինչպես նաև ոչխարաբուծական և այծաբուծական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների ավելացումը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագրի շրջանակում նախատեսվել է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունը իրականացնել 2 եղանակով.

Վարկային բաղադրիչ

Վարկերը տրամադրվում են մինչև 4 տարի մարման և մինչև 1 տարի մայր գումարի արտոնյալ ժամկետներով, իսկ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը վարկերը հասանելի են եղել 0 % տոկոսադրույքով:

Փոխհատուցման բաղադրիչ

Փոխհատուցվել է շահառուի կողմից յուրաքանչյուր գլուխը մինչև 450 հազար ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված տոհմային մատղաշի համար փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) 23 %-ը, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների կողմից մինչև 450 հազար ՀՀ դրամ արժեքով ձեռք բերված տոհմային մանր եղջերավոր կենդանիների համար՝ 27%-ը:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականին ձեռք է բերվել 125 գլուխ կենդանի, փոխհատուցման գումարը կազմել է 37.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 14 և 15-ում:



Գծապատկեր 14. 2019-2021թթ. շառունների թիվը և ձեռքբերված կենդանիների գլխաքանակը



Գծապատկեր 15. 2019-2021թթ. ձեռքբերված կենդանիների գլխաքանակն՝ ըստ մարզերի

2.7. ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի իրականացման նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է, որի շրջանակում կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով՝ ըստ տնտեսավարողի հայեցողության:

Սուբսիդավորվող վարկերը տրամադրվել են մինչև 3 տարի մարման և տարեկան մինչև 6 ամիս արտոնյալ ժամկետներով, վարկի առավելագույն գումարը սահմանվել է մինչև 150 մլն դրամ: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը հասանելի են եղել 0 % տոկոսադրույքով:

Ծրագիրն ավարտվել է 2021թ. դեկտեմբերի 31-ին, սակայն որպես բաղադրիչ ներառվել է Կառավարության 2021 թվականի 3 հունիսի N 927-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրում:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Վարկային բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2021 թվականին տրամադրվել է շուրջ 340.5 մլն դրամ գումարի 14 միավոր վարկ, 374.6 հա հողատարածքում ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 74.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ոռոգման արդիական համակարգերով ներդրված տարածքների մակերեսը ավելացել է շուրջ 1.6 անգամ:

Փոխհատուցման բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2021 թվականին տրամադրվել է 0.3 մլն դրամ գումարի 2 փոխհատուցում, 2.48 հա հողատարածքում ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար:

Ծրագրի արդյունքային ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 16 և 17-ում:



Գծապատկեր 16. 2018-2021թթ. ծրագրի շահառուների թիվն ու ներդրված ոռոգման արդիական համակարգերի տարածքները, հա



Գծապատկեր 17. Ծրագրի շրջանակներում վարկային բաղադրիչով ներդրված ոռոգման արդիական համակարգերի տարածքներն՝ ըստ մարզերի, հա

2.8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

2021 գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվող մշակաբույսերի ցանկը և ծրագիրն ընդգրկող մարզերի շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով կարտոֆիլ, սալոր, ձմերուկ/սեխ մշակաբույսերը:

Ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 4279 ապահովագրական պայմանագիր: Համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 474.6 մլն դրամ, իսկ սուբսիդավորված գումարը 275.9 մլն դրամ, իսկ կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 5832 հա: 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ապահովագրական հատուցումների քանակը կազմել է 1517 հատ, իսկ ապահովագրական հատուցման գումարը՝ 319.1 մլն դրամ:

Ապահովագրական պայմանագրերի քանակը՝ ըստ ռիսկի և մշակաբույսի, բաշխվածությունը ըստ մշակաբույսերի և մարզերի ներկայացված է գծապատկեր 18, 19 և 20-ում:



Գծապատկեր 18. Ապահովագրական պայմանագրերի քանակն՝ ըստ մշակաբույսի և ռիսկի, հատ



Գծապատկեր 19. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ ըստ մարզերի



Գծապատկեր 20. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ ըստ ապահովագրվող մշակաբույսերի, հա

2.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսության ոլորտի կորուստների ռիսկերը մեղմելու նպատակով պետական աջակցության միջոցով գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրման խթանումը, որը կհանգեցնի պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությանը, տնտեսավարողների եկամուտների աճին ու այգեգործության արդյունավետության բարձրացմանը:

Ինտենսիվ պտղատու այգիների համար մեկ շահառուին տրամադրվող վարկի առավելագույն չափը սահմանված է եղել 85 մլն դրամ, խաղողի այգիների դեպքում՝ 36 մլն դրամ, որը նախատեսված էր 10 հա տարածքի վրա կարկտապաշտպան ցանցային համակարգ ներդնելու համար:

ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ մինչև 2021 թվականի գյուղատնտեսությունում տնտեսավարողներին 0.5 հա-ից մինչև 10 հա խաղողի և պտղատու այգիների հակակարկտային ցանցերի ձեռքբերման համար մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը վարկերը հասանելի են եղել 0 % տոկոսադրույքով:

Ծրագիրն ավարտվել է 2021 թվականի դեկտեմբերի 31-ին, սակայն որպես բաղադրիչ ներառվել է Կառավարության 2021 թվականի 3 հունիսի N 927-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրում:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագրի շրջանակում 2021 թվականին 3 շահառուի տրամադրվել է շուրջ 52.3 մլն դրամ արժեքով վարկ՝ 5.2 հա պտղատու այգում կարկտապաշտպան ցանցային համակարգի ներդրման համար, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 23.4 մլն դրամ:

Ծրագրի շրջանակում կարկտապաշտպան ցանցային համակարգով այգիների մակերեսը ընդհանուր կազմել է 107.5 հա: Ծրագրի շրջանակում կարկտապաշտպան ցանցային համակարգի ներդրման տարածքների չափերը ներկայացված է գծապատկեր 21-ում:



Գծապատկեր 21. 2018-2021թթ. ներդրված կարկտապաշտպան ցանցային համակարգերն՝ ըստ պարածքների, հա

2.10. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրության ծավալները, բարձրացնել արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը: Ծրագրով առաջարկվել է ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման 3 մոդել՝ միաշերտ կամ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով 300-600 քառ.մ թունելային, պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ.մ միաթոիչք կամ բազմաթոիչք, պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ.մ միաթոիչք կամ բազմաթոիչք ջերմատուն՝ մշակության հիդրոպոնիկ եղանակով:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

2021 թվականին 24 շահառուի հետ կնքվել է պայմանագիր 554.4 մլն դրամի չափով և տրամադրվել է 227.3 մլն դրամի չափով փոխհատուցում, որի արդյունքում կառուցվել է 8 ջերմատուն: Ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի բաշխվածությունն ըստ մոդելների ներկայացված է գծապատկեր 22-ում:



Գծապատկեր 22. Պայմանագրերի բաշխվածությունն՝ ըստ ջերմատան մոդելների

2.11. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնել կենդանիների մթերատվության ցուցանիշները, որի շրջանակում պետությունը փոխհատուցել է «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը: Ծրագրի շրջանակում առաջարկվել է երեք մոդել՝ 130-280ք.մ., 281-450ք.մ., 451ք.մ. և ավելի արտադրական տարածքով:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագրի շրջանակում 2021 թվականին իրականացվել է 125 տեղազննություն, 31 քաղաքացու տրամադրվել է հավաստագիր, կնքվել է 27 պայմանագիր 361.2 մլն դրամի չափով, շահագործման է հանձնվել 23 անասնաշենք և տրվել է 44 փոխհատուցում՝ 347.8 մլն դրամի չափով:

Ծրագրի շրջանակում տրամադրված փոխհատուցումների քանակը, գումարը, բաշխվածությունն ըստ մոդելների և մարզերի ներկայացված է գծապատկեր 23, 24 և 25-ում:



Գծապատկեր 23. 2019-2021թթ. տրամադրված փոխհատուցումների քանակը և գումարը



Գծապատկեր 24. 2021թ. կնքված պայմանագրերի բաշխվածությունն՝ ըստ մարզերի



Գծապատկեր 25. 2021թ. կնքված պայմանագրերի բաշխվածությունն՝ ըստ անասնաշենքերի մոդելների

2.12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՅԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է սակավաջրության հետևանքների մեղմման, պարենային անվտանգության ապահովման համար աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, ցանքատարածությունների ավելացմանը՝ նաև չմշակվող հողերի օգտագործման միջոցով, արդյունքում տեղական աշնանացան ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագիրն իրականացվել է 2021 թվականին ՀՀ բոլոր մարզերում:



2.13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ, ՀԱՏԻԿԱԸՆԴԵՂԵՆ ԵՎ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով ռազմական և արտակարգ դրության հետևանքների՝ մասնավորապես օգտագործվող արոտավայրերի կրճատման արդյունքում անասնակերի ապահովման խնդիրների մեղմումն ու պարենամթերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագիրն իրականացվել է 2021 թվականին ՀՀ բոլոր մարզերում, որի շրջանակում շահառուներին առաջարկվել է գարնանացան ցորենի, գարնանացան գարու, վարսակի, հաճարի, լոբու, ոսպի, ոլոռի, սիսեռի, առվույտի և կորնգանի էլիտա և/կամ 1-ին վերարտադրության հավաստագրված սերմերի գնի մասնակի սուբսիդավորում կամ փոխհատուցում, որի արդյունքում սերմերը ձեռք են բերվել շուկայականից առավել ցածր գներով՝ շուրջ 50-70%:

Ծրագրից կարող էին օգտվել ՀՀ բոլոր մարզերում 1-20 հա մակերեսով հացահատիկային և կերային մշակաբույսերի, ինչպես նաև 0.5-20 հա հատիկաընդեղենի ցանքատարածություններ մշակող տնտեսավարողները:

2.14. ՀՀ-ՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի, ինտենսիվ պտղատու այգիների, հատապտղանոցների հիմնման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցության միջոցով՝ խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, ավելացնել մրցունակ խաղողի, պտղի և հատապտղի արտադրության և արտահանման ծավալները, խթանել ոչ ավանդական բարձր արժեք ապահովող մշակաբույսերի արտադրությունը, նվազեցնել կարկտահարության և այլ բնակլիմայական գործոններով պայմանավորված ռիսկերը, նպաստել ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը, մեղմել կլիմայի փոփոխության ազդեցությունը և նպաստել հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Ծրագիրն ընդգրկում է նաև մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը իրականացված հետևյալ 3 ծրագրերի բաղադրիչները՝ ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր, ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր և ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր:

2021 թվականին իրականացված աշխատանքներ

Ծրագիրն իրականացվել է ՀՀ ամբողջ տարածքում՝ երկու բաղադրիչով՝ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով:

Վարկային բաղադրիչ

Սույն ծրագրի և ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում տրամադրվել է շուրջ 32.2 մլրդ դրամ գումարի 65 միավոր վարկ, 1322.3 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 1.07 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահառուների թիվն ավելացել է շուրջ 1.2 անգամ:

Փոխհատուցման բաղադրիչ

ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում փոխհատուցումը տրամադրվելէ 0.5-ից 10 հա խաղողի, ինտենսիվ պտղատու

և հատապտղանոցների համար, իսկ ծախսերի փոխհատուցումն իրականացվել է բոլոր շահառուների համար՝ կատարված հիմնման ծախսերի (առանց առաջին տարվա խնամքի ծախսերի) 50%-ով:

2021 թվականին տրամադրվել է 899.8 մլն դրամ գումարի 52 փոխհատուցում, 134.52 հա հողատարածքում այգեհիմնման համար: Նախորդ տարվա համեմատ շահառուների թիվն ավելացել է շուրջ 7.4 անգամ, իսկ ինտենսիվ այգիների մակերեսը՝ 13.5 անգամ:

Ծրագրերի շրջանակներում շահառուների թիվն ու հիմնված այգու տարածքներն ըստ տարիների, ներդրված այգիների մակերեսն ըստ մարզերի և մշակաբույսերի ներկայացված են գծապատկերներ 26, 27, 28-ում:



Գծապատկեր 26. 2018-2021թթ. ծրագրի շահառուների թիվն ու հիմնված այգու տարածքները



Գծապատկեր 27. 2018-2021թթ. հիմնված ինտենսիվ այգիների տարածքներն (հա) ու գումարն (մլրդ դրամ)՝ ըստ մարզերի



Գծապատկեր 28. 2018-2021թթ.-ին հիմնված ինտենսիվ այգիների տարածքներն՝ ըստ մշակաբույսերի, հա

Շիրակի մարզ

- 2459 միավոր վարկ՝ 5.8 մլրդ դրամ,
- 1 խելացի անասնաշենք
- 14 գլուխ ՄԵԿ
- 58 գյուղատնտեսական տեխնիկա
- 246 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 331 մթերման պայմանագիր
- 981 ապահովագրական պայմանագիր

Արագածոտնի մարզ

- 2873 միավոր վարկ՝ 7.3 մլրդ դրամ,
- 132.2 հա ինտենսիվ այգի
- 3 խելացի անասնաշենք
- 46 գլուխ ՄԵԿ
- 2 ջերմատուն
- 17 գյուղատնտեսական տեխնիկա
- 81 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 131 մթերման պայմանագիր
- 334 ապահովագրական պայմանագիր

Արմավիրի մարզ

- 4810 միավոր վարկ՝ 15.6 մլրդ դրամ,
- 921 հա ինտենսիվ այգի
- 1 խելացի անասնաշենք
- 1 ջերմատուն
- 268 գլուխ ԽԵԿ
- 127 գյուղատնտեսական տեխնիկա
- 806.6 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 1232 մթերման պայմանագիր
- 955 ապահովագրական պայմանագիր

Լոռու մարզ

- 1853 միավոր վարկ՝ 3.8 մլրդ դրամ,
- 3 հա ինտենսիվ այգի
- 1 խելացի անասնաշենք
- 288 գլուխ ԽԵԿ
- 43 գյուղատնտեսական տեխնիկա
- 73 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 46 մթերման պայմանագիր
- 1482 ապահովագրական պայմանագիր

Կոտայքի մարզ

- 1758 միավոր վարկ՝ 4.8 մլրդ դրամ,
- 158.8 հա ինտենսիվ այգի
- 4 խելացի անասնաշենք
- 0.5 հա կարկտապաշտպան ցանցային համակարգ
- 5 ջերմատուն
- 68 գլուխ ԽԵԿ
- 42 գյուղատնտեսական տեխնիկա
- 1.8 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 277 մթերման պայմանագիր
- 108 ապահովագրական պայմանագիր

Երևան

- 5150 միավոր վարկ՝ 6.2 մլրդ դրամ,
- 87 գյուղատնտեսական տեխնիկա
- 4.4 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 2792 մթերման պայմանագիր

Արարատի մարզ

- 3938 միավոր վարկ՝ 12.9 մլրդ դրամ,
- 181 հա ինտենսիվ այգի
- 2 խելացի անասնաշենք
- 30 գլուխ ԽԵԿ
- 44 գլուխ ՄԵԿ
- 70.4 հա կարկտապաշտպան ցանցային համակարգ
- 46 գյուղատնտեսական տեխնիկա
- 2.1 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 7541 մթերման պայմանագիր
- 222 ապահովագրական պայմանագիր

Տավուշի մարզ

- 1570 միավոր վարկ՝ 3.2 մլրդ դրամ,
- 4 հա ինտենսիվ այգի
- 2 խելացի անասնաշենք
- 44 գյուղատնտեսական տեխնիկա
- 425 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 467 մթերման պայմանագիր
- 64 ապահովագրական պայմանագիր

Գեղարքունիքի մարզ

- 2960 միավոր վարկ՝ 7.2 մլրդ դրամ,
- 18.6 հա ինտենսիվ այգի
- 4 խելացի անասնաշենք
- 32 գլուխ ԽԵԿ
- 287 գլուխ ՄԵԿ
- 60 գյուղատնտեսական տեխնիկա
- 496.8 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 663 մթերման պայմանագիր
- 96 ապահովագրական պայամանագիր

Վայոց ձորի մարզ

- 728 միավոր վարկ՝ 1.7 մլրդ դրամ,
- 32.2 հա ինտենսիվ այգի
- 2 խելացի անասնաշենք
- 64 գլուխ ԽԵԿ
- 11 գյուղատնտեսական տեխնիկա
- 9 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 83 մթերման պայմանագիր
- 36 ապահովագրական պայմանագիր

Սյունիքի մարզ

- 1388 միավոր վարկ՝ 3.8 մլրդ դրամ,
- 5.5 հա ինտենսիվ այգի
- 3 խելացի անասնաշենք
- 21 գլուխ ՄԵԿ
- 14 գյուղատնտեսական տեխնիկա
- 71 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 44 մթերման պայմանագիր
- 1 ապահովագրական պայմանագիր